

# ԸՆԴՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱՆԱԿԻ  
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Վաղ միջնադարյան հայ գիտական մտքի մեծագույն ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի գիտական հարուստ ժառանգությունը արժանի է համակողմանի ուսումնասիրության: Այն բացառիկ կարևոր նշանակություն ունի հայ քերականական, տրամաբանական, իմացաբանական, բարոյագիտական, փիլիսոփայական և գեղագիտական մտքի կազմավորման համար: Սակայն առաջին հերթին անհրաժեշտ է պարզել Դավիթ Անհաղթի անձնավորությունը և նրա ապրած մոտավոր ժամանակը, որ հնարավորություն կընձեռի ձշտելու նրա գիտական ժառանգությունը:

Դավիթ Անհաղթի մասին կենսագրական սուղ տեղեկություններ են պահպանվել ձեռագրական հիշատակարաններում, նրան վերագրվող երկերի նախադրություններում ու Պատճառներում: Դավիթին վերագրվող «Խաչի ներբողյանի» նախադրության մեջ կարդում ենք. «Դավիթ փիլիսոփայ ասացեալ որ լիապէս գիտէ զտեսականն և զգործնականն. և զմասունս նոցա զերկոտասան ի շարք գաւառէ ի Հերեթն գեղջէ. աշակերտ Սահակայ և Մեսրոբայ. զոր ասեն քուերորդի Մովսեսի քերթողահօրն, ի վաթսնիցն՝ որք ընտրեցան ուշեղք և փափկաձայնք և երկարոգիք, և ամենայն առաքինութեամբ զարդարեալք. որք յետ հարիւր մետասան ամի սրբոյն ՚րիգորի՝ ի գտանել զրոյ ազգիս ընտրեցան, և շոգան յազգս՝ ուսանել իմաստասիրութիւն և արուեստախօսութիւն, և առնել թարգմանութիւն, յԱղեքսանդրիա և յԱթէնս և յայլ գաւառս: Եւ որք ընդ նմա գնացին, Մամբրէ եղբայրն Մովսիսի, Մուշէ և Եղիշէ, Եղնակ և Արձան արծրունի և Աղան: Եւ ի դառնալն զի բազում ժամանակք էին անցեալ, և յոլով անցք անցեալ ընդ երկիրս. ...կոտորումն սրբոց վարդանանց. և բաժանումն հայրապետութեանն յերկուս. Յոհան Մանղակունի ի Պարսից կողման կաթողիկոս. և Գիւտ ի կողմանս Յունաց՝ յաշակերտաց սրբոց քահանայիցն»<sup>1</sup>:

Կրտսեր թարգմանիչների մասին վերոհիշյալ տեղեկությունները, ընդհանուր առմամբ, համապատասխանում են Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու հաղորդած տեղեկություններին: Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ գրում է, որ Եփեսոսի ժողովից (431 թ.) հետո Սահակն ու Մեսրոպը աշակերտների մի նոր խումբ ուղարկեցին Աղեքսանդրիա, պանծալի

<sup>1</sup> «Դավիթ Անհաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ Թուղթ Գիտայ կաթողիկոսի առ Դավիթ», նախադրութիւն ներբողենի Խաչի, Վենետիկ, 1932, էջ 5:

լեզուն՝ հունարենը սովորելու և իսկական ճեմարանում կատարելագործվելու համար: Երկար ժամանակ հունական առաջավոր կենտրոններում քերթողական արվեստն ուսումնասիրելուց և դիտական ու գործնական աշխատանքների ընթացքում հունարեն լեզվին լիովին տիրապետելուց հետո, երբ նրանք հայրենիք վերադարձան, իրենց ուսուցիչները՝ Սահակն ու Մեսրոպը վախճանված էին: Պատմահայրն իր «Ողբի» մեջ գառնությամբ գրում է. «Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախացի ընդ առաջագիմութիւն աշակերտիս. ո՞վ զհայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորգւոյս: Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընգգէմ առողջ վարգապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւք քակտեալք եւ քայքայեալք՝ յոլովս փոփոխեն վարդապետս եւ բազում գիրս, ... եւ շար օրինակ գրեն զայն անձանց՝ զծիճաղելն զմեւք եւ զարհամարհելն իբրև զանհաստասկնովք, եւ որ ոչ ինչ պիտանացու ունիցի արուեստ: Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, եւ զմեզ սփոփեսցէ գովելով, եւ շափ դնիցէ բանի եւ լուծեան»<sup>2</sup>: Դժբախտաբար, հորենացին չի նշում, թե ովքեր էին իր ուսումնակիցները:

Ղազար Փարպեցին իր «Թղթի» վերջում նույնպես վկայում է Մովսես փիլիսոփոսի և այլ կրտսեր թարգմանիչների կրած հալածանքների մասին<sup>3</sup>:

Դավիթ Անհաղթի մասին կենսագրական տեղեկություններ է հաղորդում նաև Վարդան պատմիչը «Խաչի ներբողյանի» իր Պատճառում. «Այլ գտի յօրինակս հինս՝ մերձ առ քարգմանութիւնս գրեալ, եթէ սա էր աշակերտեալ մեծին Մովսիսի քերթողին՝ աստուածեղէն գրոց, ի Հարք գաւառէ, ի Հերեթն գեղջէ, որդի առն բարեպաշտի եւ սիրողի Աստուծոյ, մի յայնցանէ, որ միաբան ընտրեցան յաշակերտութիւն հելլենական դպրութեանն, ի ժամանակս Վահանայ որդւոյ Մագնոսի, որդւոյ Վարդանայ. եւ ի հայրապետութեանն տեառն Գիւտի եւ զկնի Յօհանայ Մանդակունւոյ»<sup>4</sup>:

Չեռագրական նույնպիսի մի հին աղբյուր պետք է ունեցած լինի նաև Ստեփանոս Ասողիկը, որն իր «Պատմութիւն տիեզերական» երկի մեջ հիշատակում է Մամբրե Վերծանողին և Դավիթ Հարքացուն. «...Դաւիթ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ ի Հերետն գեղջէ»<sup>5</sup>: Ասողիկը Մամբրեի և Դավիթի ժամանակը դնում է V դարի երկրորդ կեսը, նրանց ժամանակակից է համարում Գյուտ կաթողիկոսին և Հովհան Մանդակունուն: Ասողիկից են փոխ առել նույն տեսակետը, ըստ Ն. Ակինյանի<sup>6</sup>, Մխիթար Անեցին, Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին, ինչպես նաև Չամչյանը, Ալիշանը, Օրմանյանը:

«Խաչի ներբողյան» ճառի թե՛ Նախագրության հեղինակը և թե՛ Վարդան Հաղբատացի պատմիչն իր Պատճառում առավել հավանական են համարել Դավթին Գյուտի (461—476 թթ.) ժամանակակից համարել, քան Վահանի (որի մարգպանության շրջանը 485-ից հետո է), նկատի ունենալով մասնա-

<sup>2</sup> «Մովսէսի հորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 372:

<sup>3</sup> Տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1908, էջ 436—437:

<sup>4</sup> Ն. Ակինյան, Դավիթ Հարքացի, Անհաղթ փիլիսոփա, Վիեննա, 1959, էջ 51:

<sup>5</sup> Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 39:

<sup>6</sup> Ն. Ակինյան, նույն տեղում, էջ 57:

վորապես Գյուտի Թուղթը Դավթին ուղղված և Դավթի պատասխան Թուղթը Գյուտին. «Այլ մեզ ստուգելի բույ Գիտայ հայրապետութեամբ եղեալ խնդիրս: ...Եւ զի ի խնդրոյ Գիտայ եւ առաջնորդաց ժամանակին էր, գտաք ի գիրք թարգմանչացն ի սկիզբն այսր նաոյ ընդդէմ խնդրողացն պատասխանի այսմիկ յասելն...»<sup>7</sup>:

Դավթի անձնավորութեան և գիտական ժառանգութեան մասին հետաքրքրական որոշ տեղեկություններ պահպանվել են նաև «Սահմանք իմաստասիրութեան» երկի Պատճառում. «Յորժամ գնաց մեծ եւ կատարեալ փիլիսոփայն Դաւիթ ի մայրաքաղաքն իմաստութեան յԱթէնս եւ վարժեալ եղեալ մեենայն իմաստութեամբ, մինչեւ ընդ առաջին իմաստունսն համարել գնա: Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ բաղում հակառակութիւն ի մէջ իմաստասիրացն վասն իմաստութեան, ...դորմի ըստ միոջէ ցուցանէ մեծս Դաւիթ. յինքն առեալ ղամենայն հոգս իրին, եղծ ղամենայն հակառակութիւնս նոցա եւ եցոյց գոյաւոր զիմաստութիւն եւ ասեալ զբանս նոցա եւ եցոյց միմեանց հակառակ գոյ: ...Եւ թէ ոք հարցանէ թէ ի վերնագիրն զիր անունն ընդէ՞ր ոչ է եղեալ, թէ նորա արարած է այս գիրք: Վասն զի ոչ ունէին հպարտ ազգս հայոց զիմաստս վարդապետաց իւրեանց, ոչ եղ զանունն, զի մի կորուսցեն եւ կամ մի առաւել պատուեցեն այլ<sup>8</sup>: Իսկ ի Բարձրացուցեացն սկիզբն յետոյ եղին զնորա անունն եւ Սահմանաց գիրս ոչ գտեալ եղեւ յայնժամ եւ այլ յետոյ շարարին փոյթ դնել զանուն նորա: Ասաց սա շորս գիրքն. առաջին՝ զԲարձրացուցէքն, երկրորդ՝ զՍահմանացն, երրորդ՝ զՔերականին մեկնիչն, չորրորդ՝ զՊէտքն, գոն եւ առանձինն այլ ճառեր, արար հինգերորդ՝ եւ սաղմոսին պատճառ եւ զի ոչ գոյր փափագանօք խնդրող, վասն այն եւ նա ոչ արար գիրք այլ, զի մի՛ նախատեսցի, որպէս յառաջդ ասացաք: Ապա թէ ոչ իմաստուն էր առաւել քան զառաւել» (ընդգծումները մերն են—Ա. Մ.)<sup>9</sup>: Ընդգծված նախադասությունները վկայում են Դավթի ապրած ժամանակի և նրա կրած դառնությունների մասին: Նա, որ հաղթելով հույն փիլիսոփաներին՝ նրանցից ստացել էր «անհաղթ» ու «եռամեծ փիլիսոփա» տիտղոսները և հայրենիք էր վերադարձել գիտելիքների մեծ պաշարով, իր հայրենակիցներին ևս հաղորդակից դարձնելու ժամանակի հունական առաջավոր գիտութեան նվաճումներին, իր գործերի վրա անունը չի գրում, որպեսզի դրանք չկորցնեն կամ ուրիշներն ավելի չպատվեն. նա ուրիշ գրքեր չի գրում, որովհետև փափագող, խնդրող չկա, կամ՝ որպեսզի շնախատվի գիտութեան նկատմամբ անտարբեր իր հայրենակիցների կողմից:

Ուշագրավ է նաև «Սահմանաց գրոց» Պատճառում բերված մեկ այլ տեղեկություն, ըստ որի հույները Դավթին համարել են իրենց ազգակից և նրան վերագրել յոթ գիրք, իսկ հայերենով՝ շորս կամ հինգ գիրք, նշելով, որ նա կարող էր ավելի շատ գրքեր գրել, բայց իր ազգի անիշխանության ու անընտե-

<sup>7</sup> Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. XXX—XXXI.

<sup>8</sup> Այս նախադասությունը Գ. Զարբհանալյանի մոտ հանդիպում է մի փոքր տարբեր. «Քանզի ոչ ընդունէին հպարտ ազգս Հայոց զիմաստս վարդապետաց իւրեանց, ոչ եղ զանունն՝ զի մի՛ կորուսցեն եւ կամ զի մի՛ գիտացցեն եւ պատուեցցեն գնա». Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրութիւն (Դ—ԺԳ), Վենետիկ, 1897, էջ 321:

<sup>9</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ XXXII—XXXIV.

լուծյան պատճառով նրա գիտական գործունեությունը խափանվեց. «Բայց Յոյնք ասեն է՝ գիրք ունեւ զԴաւթի եւ իւրեանց ազգէն: Այլ յայտնի աշակերտ է Մովսիսի բերթողի եւ ազգական եւ ի Հարբ գաւառէ ի Հերեթն դեղջէ եւ առ մեզ են Ե գիրք սորա. ա. Բարձրացուցէքն. բ. Սահմանացս. գ. Պէտքն, դ. Մեկնուրին Քերականին. ե. մեկնիչն Արիստոտէլին...»<sup>10</sup>: Նույն «Սահմանաց գրոց» մեկ այլ Պատճառում Դավթին վերագրվում է շորս դիրք և ավելացվում. «Են եւ այլ ճառք առանձնականք եւ մեկնութիւն վերնագրաց սաղմոսին: Կարող էր եւ լագմաց աստուածատուր իմաստիցն, զի զբնական եւ զընդհականն քաջ ունէր զատ յուսմանէն: Այլ վասն անիշխանութեան եւ ազգիս անընդունարեանն իսպիան և դեւ: Զայս գիրքս ի նոցունց գրոց հաստատէ զկարն յայտնել»<sup>11</sup>:

Ինչպես նշեցինք, Դավթի Անհաղթը իր գործերի վրա իր անունը չի գրել. հետագայում ուրիշներն են այն ավելացրել: Այդ պատճառով էլ նրան վերագրվող տարբեր գործերի վերնագրերում նա կոչվել է տարբեր անվանումներով, մերթ՝ Ներգինացի, մերթ՝ Հարբացի, մերթ՝ Անհաղթ, մերթ՝ Նուամեծ փիլիսոփա, կամ՝ պարզապես փիլիսոփա:

«Ներգինացի» անվանման մասին տրվել են տարբեր բացատրություններ: Առաքել Սյունեցին իր «Մեկնութիւն Սահմանաց գրոց» երկի Պատճառի մեջ Դավթի մասին գրում է. «Ուստի՞ էր նա: Այսինքն Ներգինացի կոչի. Ներգինեայ է զիւղն այն, ուր Անանիա Շիրակացին առաւօտու երգերն էր ասացեալ: Եւ Դաւիթ յայսմ գեղջէ էր, որ է ի Տարօնոյ գաւառէն»<sup>12</sup>: Սյունեցու այս տեղեկության վրա հենվելով՝ Մ. Զամչյանը երեք անգամ հիշատակում է. «Դաւիթ... ի գաւառէն Հարբայ ի գեղջէն Ներգինայ առ սահմանոք Տարօնոյ (Ա, էջ 539, 783 և Գ յաւելուած, էջ 173, Ներգին կամ Ներգին գիւղ)»<sup>13</sup>: Գ. Զարբհանայանը գրում է. «Մովսեսի խորենացվունքն քեռորդի էր Դավթի, Տարօնո մոտ Հարբ գավառին Հերեթ գյուղեն, և կամ ըստ այլոց՝ Ներգյուն ավանեն, ուստի և Ներգինացի կոչված»<sup>14</sup>: Իսկ Գ. Տեր-Մկրտչյանն այդ մակդիրը բացատրում է հետևյալ կերպ. «Դավթի Հարբացին, որ կոչվում է նաև Հերտանացի կամ Հերետնացի՝ գյուղի անունով, այլ և Ներգյունացի կամ Ներֆինացի՝ Ներֆնավանքի անունով, ուր թաղված է ըստ ավանդության, չէ՞ մի առասպելյալ անձնավորություն... ինչպես կարծել են նորագույն քննադատները»<sup>15</sup>:

«Փիլիսոփա» մակդիրի մասին Ներսես Շնորհալին տալիս է հետևյալ բացատրությունը. «Ունիմք սովորութիւն փիլիսոփայ ասել, որ յերաժշտական արուեստի կատարեալք են. այսպէս եւ Դաւիթ՝ ոչ միայն փիլիսոփայ, այլ

10 Հ. Մանանդյան, Ուսումնասիրություն Դավթի Հարբացի փիլիսոփային վերագրված իմաստասիրական երկերի, «Արարատ», Վաղարշապատ, 1904, էջ 168: Նույն հոդվածը առանձին լույս է տեսել և հայտնի է «Դավթի Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» վերնագրով:  
11 II. А ДО Н У, նշվ. աշխ., էջ XVII:  
12 «Առաքել Սիւնեցոյ Մեկնութիւն Սահմանաց գրոցն Դաւթի», Մաղրաս, 1797, էջ 169—172:  
13 Ն. Ա կ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 63—64:  
14 Գ. Զարբհանայան, նշվ. աշխ., էջ 314:  
15 Գ. Տեր-Մկրտչյան, Դավթի Հարբացի, «Արարատ», Վաղարշապատ, 1902, սեպտ.-հոկտ., էջ 937:

յաստուածեղէն եւ յարտաքին հրահանգս անթերի եւ լիապատար էր, նորին աղագաւ կոչի փիլիսոփայ, զպատին զեկուցանելով»<sup>16</sup>:

Իսկ Դավթի գործերի հունարեն բնագրերի վերնագրերում իր բարեպաշտութեան համար նա կոչվել է «յոյժ աստուածասէր եւ աստուածախոհ փիլիսոփայ»։ օրինակ՝ Τα προλεγόμενα της φιλοσοφίας από φωνής Δαβίδ του θεοφιλοτάτου και θεόφορονος φιλοσοφου, հայերեն՝ «Յառաջարանութիւնք իմաստասիրութեան ի ձայնէ Դաւթի յոյժ աստուածասէր եւ աստուածախոհ փիլիսոփայի» (կամ՝ «Սահմանք իմաստասիրութեան»)։ Դավթի իմաստասիրական գործերի հունարեն բնագրերի վերնագրերն ունեն նաև από φωνής Δαβίδ «ի ձայնէ Դաւթի» մակագրութիւնը, որ նշանակում է՝ «Դավթի կողմից թելադրված», այսինքն՝ Դավթի զաստիսուել է և աշակերտները գրի են առել<sup>17</sup>:

Դավթի Անհաղթի մասին հետագա դարերի հեղինակներից հիշատակութիւններ ունեն նաև Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհան Ռոտունեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ։ Բերենք Առաքել Սյունեցու տեղեկութիւնները, որոնք առավել ամբողջական են. «Յորմէ՞ ազգէ էր. այսինքն յայտ է, զի ազգաւ հայկազին էր։ Յորմէ՞ ժամանակի էր. այսինքն յորժամ սուրբն Մեսրոպ և սուրբն Սահակ հայրապետն արարին գիր Հայոց, ընտրեցին մանկունս հանճարեղս հնգետասան և ետուն թարգմանել զամենայն գրեանս Յունաց ի մեր լեզուս. ...Եւ յետ թարգմանութեան գրոցն ընտրեցին զնոսա 60 արս եւ յղեցին յԱթէնս, զի ուսցին զամենայն իմաստութիւնս եւ զայցեն եւ աթոռ դպրութեան դիցեն ի Հայս...։ Իսկ յետ դառնալոյն նոցա յԱթենայ՝ վճարեալ էր սուրբ Վարդանանց պատերազմն ի Պարսից. եւ եղեալ էր ժողովն Քաղկեդոնի հերձուածոյն. զոր եկեալ մեծն Դաւիթ եւ Մովսէս Քերթողն, յանդիմանեցին զգլխաւորս Քաղկեդոնի ժողովոյն, եւ ափ ի բերան արարին զնոսա. եւ ոչ երկեան ի թագաւորէն Մարկիանոսէ...։ Եւ էր յառաջ բան զթուականն Հայոց ՀԳ ամաւ...։ Իսկ ի սրբոյն Մեսրոպայ մինչեւ ի թուականն Հայոց ՃԼԳ ամ էր անցեալ...։ Թէ որմէ՞ ուսմամբ էր Դաւիթ. Այս ինքն զամենայն իմաստասիրութիւն ուսեալ էր Դաւիթ ժԲ. մասամբ...։ Թէ որպիսի՞ պատիւ ունէր. այսինքն է, զի ունէր պատիւ քահանայութեան եւ վարդապետութեան եւ իմաստասիրութեան...։ Կոչեցաւ Անյաղթ...։ Թէ քանի՞ դիրք գրեաց. այսինքն Ե. ա. զՍահմանքս. բ. զԲարձրացուցէքն. գ. Պէտքն. դ. զՄեկնութիւն Քերականին. ե. զՄեկնութիւն Պորփիրի եւ զԱրիստոտէլի։ ...Վասն է՞ր ոչ արդիւնաւորեցաւ բանք նորա ի Հայս, այնպիսոյ փառաւոր առն եւ առաքինոյ եւ իմաստասիրի։ Եւ այս վասն հինգ պատճառի. նախ՝ զի յետ Վարդանանց պատերազմի դառնացեալ էին Հայք, եւ ամենայն բան աչաց ելած էր նոցա վասն աւերութեան աշխարհիս եւ կոտորման իշխանացն. երկրորդ՝ զի ոչ գոյր ուսումնական, ...երրորդ՝ զի յանդիմանեալ ի նմանէ՞ անարգեցին զնա եւ դբանս նորա, եւ հարեալ վիրաւորեցին զնա. եւ նա գնացեալ ի Վիրս, անդ կացեալ վախճանեցաւ. չորրորդ՝ զի անիշխան էր ազգս եւ ոչ ոք էր որ յարգէր զնա»<sup>18</sup>:

<sup>16</sup> Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 315:

<sup>17</sup> Տէր. Ա. Կիւնյան, նշվ. աշխ., էջ 11:

<sup>18</sup> Առաքել Սյունեցի, էջ 169:

Դավիթ Անհաղթի մասին կենսագրական որոշ տեղեկություններ տրվում են նաև նրա քերականական աշխատության տեքստը պարունակող մի ձեռագրում: «Այդ տեղեկությունների վերջին մասը,— դրում է Գ. Զահուկյանը,— զգալի տարբերություններ ունի հրապարակված հատվածներից և նոր լույս է սփռում Դավթի կյանքի որոշ կողմերի վրա: Այստեղ պատմվում է, թե ինչպես Դավթը նախ հրաժարվել է հոգևոր կոչումներից՝ քահանայությունից և եպիսկոպոսությունից, ապա մեծ դժվարությամբ զիջել զանազան հորդորանքներին: Վերջում, հավանաբար Դավթի եպիսկոպոս ձեռնադրվելու պատմությանը ավելի մեծ հեղինակավորություն հաղորդելու նպատակով, ձեռնադրող է համարվում Գրիգոր Նյուսացին (IV դար), որ, իհարկե ակնհայտ պատմական անախրոնիզմ է»<sup>19</sup>:

Դավթի հոգևոր կոչում ունենալը, ինչպես տեսանք, հաստատում է նաև Առաքել Սյունեցին. «Թէ որպիսի՞ պատիւ ունէր. այսինքն է, զի ունէր պատիւ քահանայութեան եւ վարդապետութեան եւ իմաստասիրութեան»:

Ավանդությունը Դավիթ Անհաղթին խոր ծերություն է վերագրում: Նա թաղվել է «Տարոնո մոտ Ղազարու վանքը, ուր ինչուան հիմա կը ցուցընեն իր գերեզմանը և ուր դեռևս կը հաճախեն իմաստության և ճարտարխոսության ձիրքը խնդրելու և ընդունելու փափաքողք հուսով»<sup>20</sup>:

Մշո Առաքելոց վանքը, որը հայտնի է նաև Ս. Ղազարի, Տիրինկատարի, Ս. Թադեոսի անուններով, կոչվել է նաև Թարգմանչաց վանք այն պատճառով, որ այստեղ թաղված են եղել գիտնական-թարգմանիչ վարդապետներ, և եղել են թարգմանիչների ինը խաչքարեր, որոնցից միայն մեկը՝ Դավիթ Անհաղթինն է մասամբ պահպանվել հետևյալ մակագրությամբ. ...ՆՇՂԳ ԿՆԳԵՅԱԻԽԱՉՍԻԲԱ || ԲԵԽԱԻՍՈՒՆՏԵՆԴԱԻԹԻԱՆՅԱՂԹ || ՓԻԼԻՍՈՎՓԱՅԻՅԻՇԵՑԷՔԻԹՍԱ... || ՉՄԵՂՈՒՑԵԱԼ. ԳԷՈՐԳԾՈՆԿՍՅԻՇ որի վերծանությունն է՝ «1144-ին կանգնեցաւ այս խաչը ի բարեխօսութիւն Տեառն Դարթի Անյաղթ փիլիսոփայի. յիշեցէք ի Քրիստոս մեղուցեալ Գէորգ ձոնակին յիշեցէք»<sup>21</sup>: Այս մակագրության մեջ Դավթի Տէր ածականը նույնպես վկայում է նրա հոգևոր կոչման մասին:

Ըստ ավանդության, Մովսեսն ու Դավիթը, մոտ երեսուն տարի հունական գիտական կենտրոններում սովորում և եռանդուն կերպով թարգմանական աշխատանքով են զբաղվում և Վարդանանց պատերազմից (451 թ.) հետո վերադառնում են հայրենիք՝ իրենց հետ բերելով գրքեր, որոնք թարգմանել էին այնտեղ եղած ժամանակ: «Եւ էր ի ժամանակին յայնմիկ կաթողիկոսն Հայոց տէր Գիւտ՝ աշակերտակից Մովսէսի...»<sup>22</sup>:

Ավանդության տվյալների մեջ անշուշտ կան ժամանակագրական որոշ վրիպումներ ու շափազանցություններ, սակայն չի կարելի ամբողջ ավանդությունը «վիպախառն առասպել» համարել այն դեպքում, երբ կրտսեր թարգ-

19 Գ. Զահուկյան, Դավթի քերականական աշխատության ամբողջական ձեռագիր տեքստը, «Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1956, էջ 242:

20 Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 316—317:

21 J. M. Thierry, Le couvent des saints-apôtres de Muš, «Հանգես Ամսօրյա», Վիեննա, 1876, էջ 248:

22 Ֆր. Կոնիսեր, Համեմատություն Դավիթ Անհաղթի գրյանց հունարեն բնագրի հետ, Վաղարշապատ, 1893, էջ 15:

մանիչների ուսումնառության և նրանց վերադարձի մասին տեղեկությունները չիտվին համապատասխանում են ոչ միայն հորենացու և Փարպեցու վկայություններին, այլև նրանց ժամանակակից պատմական անձնավորություններին: Այդպիսիք են, օրինակ, Թեոդոս II կայսրը (408—450 թթ.), որի հրավերով կրտսեր թարգմանիչները գնում են Բյուզանդիոն՝ հունարեն լեզվի և թարգմանական արվեստի մեջ հմտանալու համար, Մարկիանոս կայսրը (452 թ.), որի օրով Մովսեսն ու Դավիթը Ալեքսանդրիայից վերադառնում են Կ. Պոլիս և ելույթ ունենում Քաղկեդոնի ժողովի (451 թ.) դեմ, Գյուլո կաթողիկոսը (461—476 թթ.), որը կրտսեր թարգմանիչներից է, հորենացու ուսումնակից, և որի մասին Փարպեցին գրում է՝ «այդ լի գիտութեամբ հայովս, և առաւելեալ յունիւն»<sup>23</sup>, Հովհան Մանգակունին (478—490 թթ.), որը նույնպես կրտսեր թարգմանիչ է<sup>24</sup> և Վահան Մամիկոնյանը, որը Հայաստանի մարզպան է դառնում 486 թ.:

Կրտսեր թարգմանիչների ինքնուրույն և թարգմանական երկերի լեզվական առանձնահատկություններն իրենց հերթին լավագույն կուլան են՝ որոշելու հունաբան դպրոցի սկիզբն ու գործունեության ժամանակը:

Այսպիսով, ձեռագրական հնագույն հիշատակարանների տեղեկությունները, պատմիչների և հայ հին մատենագիրների վկայությունները, ինչպես նաև կրտսեր թարգմանիչների երկերի լեզվական առանձնահատկությունները հիմք են ծառայել հայ բանասիրությանը կրտսեր թարգմանիչների, հետևաբար նաև հունաբան դպրոցի գործունեության սկիզբը համարել V դարի կեսերը: Այս ուղղության հիմնադիրներն ու զլխավոր ներկայացուցիչներ են համարվել Մովսես հորենացին ու Դավիթ Անհաղթը: Վերջինիս գրչին են վերագրվել հունաբան դպրոցի փիլիսոփայական գրեթե բոլոր թարգմանություններն ու մեկնությունները: Այս տեսակետը հայ բանասիրության կողմից անվերապահորեն ընդունվել և արժանահավատ է համարվել մինչև XIX դարի վերջերը: XIX դարի ութսունական թվականներին, երբ քննական բանասիրությունը կասկածի տակ առավ Մովսես հորենացու «Հայոց պատմության» արժանահավատությունն ու վավերականությունը և հորենացուն տարավ IX դար, կրտսեր թարգմանիչների մասին մատենագրական ավանդությունն էլ համարվեց «անվավեր» և «վիպախառն առասպել»: Բնականաբար, անհրաժեշտություն զգացվեց «ճշտելու» նաև Դավիթ Անհաղթի ժամանակի, անձնավորության և գիտական ժառանգության հարցերը:

XIX դարի վերջին, XX-ի սկզբին հայ ու եվրոպացի մի շարք բյուզանդագետներ և հայագետ բանասերներ (Կ. Նոյման, Վ. Ռոզե, Ֆր. Կոնիբեր, Ա. Բուսե, Կ. Կրումբախեր, Մ. Խոստիկյան, Դ. Տեր-Մկրտչյան, Գ. Հովսեփյան, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան) զբաղվել են Դավթի անձնավորության, ժամանակի և նրա երկերի քննությամբ: Հիշյալ բանասերները, մեծ մասամբ առաջնորդվելով այն կանխակալ կարծիքով, որ մատենագրական ավանդությունը առասպել է, հետևաբար հորենացին ու Դավիթ Անհաղթը V դարի կրտսեր թարգմանիչներ չեն, Դավթի անձնավորության և ժամանակի առեղծվածը լուծելու նպատակով ջանացել են Անհաղթին սահմանազատել V—VII դդ. ապրող այլ Դավթներից:

<sup>23</sup> Ղաղար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 110:

<sup>24</sup> Տե՛ս Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 295:

Անհաղթի անձնավորության հարցը խճճելուն առիթ են ավել մի շարք հանգամանքներ, ինչպես՝ նրա տարբեր տեղանուններով կոչվելը (Հարքացի, Հեռետնացի, Ներգինացի), նրա երկերի բնագրի լեզուն (հունարեն<sup>25</sup>, թե՞ հայերեն), ազգությունը (հույն, թե՞ հայ), նրան վերագրվող երկերն ու մեկնությունները (ինքնուրույն, թե՞ թարգմանություն), աշխարհայացքը (հեթանոս, թե՞ քրիստոնյա), դավանանքը (միաբնակ, թե՞ երկաբնակ), նրա տարբեր բնույթի երկերը, որոնց պատճառով նա կոչվել է փիլիսոփա, մեկնիչ, ֆերական, ֆերթոլ և կամ թարգմանիչ:

Այս բոլորը ուսումնասիրողներին հիմք են տվել մտածելու, որ մատենագրական ավանդությունը իրոք առասպել է, որ նույն անձը չէր կարող տարբեր տեղանուններով կամ այդքան տարբեր կոչումներով անվանվել: Ուստի Դավիթի անձնավորությունը «ճշտելու» նպատակով տարբերվել են Դավիթ Հարքացին, Դավիթ Ներգինացին, Դավիթ Մեկնիչը, Դավիթ Քերականը, Դավիթ Քերթոլը, Դավիթ Թարգմանիչը, Դավիթ Տարոնացին, Դավիթ Բագրևանդացին և Դավիթ Հյուսիսացի:

V դարում «եռյակ գիտությունները»՝ քերականությունը, ճարտասանությունը և փիլիսոփայությունը կազմում էին անտիկ աշխարհի ուսման ծրագրի առաջին աստիճանը: Նույն դարում կրտսեր թարգմանիչները հունական գիտական կենտրոններում յուրացնում էին այդ գիտությունները, հմտանում էին «քերթողական արվեստի» մեջ, այդ պատճառով էլ հունաբան դպրոցի մատենագիրները կոչվում էին «ֆերական», «ֆերթոլ», «թարգմանիչ», «մեկնիչ», «փիլիսոփա», «իմաստասեր»: Մ. Աբեղյանը խորենացու մասին ասում է, որ նա սովորաբար կոչվել է «քերթող» և «քերթողահայր», ուրեմն նա ամբողջությամբ յուրացրած պետք է լիներ քերթողական արվեստը՝ քերականությունն ու ճարտասանությունը և քերթողությամբ հայտնի դարձած: «Նրա «քերթողահայր» մականունը, — դրում է Մ. Աբեղյանը, — ցույց է տալիս, որ նա եղել է ականավոր գրական գործիչ և թարգմանիչ, նաև քերականության հունաբան դպրոցի շրջանից կան հիշատակարաններ, որոնք «քերական» բառի փոխանակ կամ իբրև սրա համանիշ գործածում են «քերթող» բառը, որ սովորաբար նշանակում է «պոետ», «արարող»: Քերթողահայր Մովսես խորենացի եպիսկոպոսը եղել է և փիլիսոփա»<sup>26</sup>:

Այս բոլոր մականունները իրավացիորեն տրվել են նաև Դավիթ Անհաղթին. նա եղել է ֆերական, ֆերթոլ, թարգմանիչ, մեկնիչ և հատկապես փիլիսոփա:

Մեր նախորդ հոդվածում<sup>25</sup> լեզվական համեմատությունների և բանասիրական դիտողությունների հիման վրա աշխատեցինք ցույց տալ, որ Դավիթ Անհաղթը եղել է նաև ֆերական: Նա է Թրակացու «Քերականության» հայ թարգմանիչը և այդ թարգմանության հնագույն մեկնության հեղինակը՝ Ն. Աղոնցի և Հ. Մանանդյանի առարկությունները՝ Թրակացու «Քերականության» թարգմանչին, «Մեկնութիւն քերականիսի» հեղինակ Դավիթ փիլիսոփային և «Սահմանք իմաստասիրութեան» երկի հեղինակ Դավիթ Անհաղթին:

25 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 253:

26 Տե՛ս Ա. Մուրադյան, Դիոնիսիոս Թրակացու Քերականության թարգմանչի և մեկնիչի հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1980, № 3, էջ 65—87:



տարբերելու հարցում հիմնավոր շեն: Այդ երեքը ոչ թե տարբեր անձնավորություններ են, այլ՝ նույն Դավիթ Անհաղթը:

Դավիթ Անհաղթը եղել է նաև ֆերոդ: Հայ մատենագրությունը նրան է վերագրում որոշ քերթություններ: Թրակացու «Քերականության» հայերեն թարգմանության Անանուն Մեկնիչը, որը հավանաբար Դավթի ուսումնակից Մամբրե Վերժանողն է, «քաջուորակ տաղը» բացատրելու համար իբրև օրինակ բերում է Դավթի ֆերթությունը Տիգրանի մասին. «Իսկ քաջուորակի տաղասի Դաւթեան քերթութիւն [եւ] որ յաղագս Տիգրանայ, յորժամ երկար բառիւք եւ ոլորակաւք ի սկսմանէ մինչեւ յաւարտումն զմիտս առեալ բերիցէ, որպէս յորժամ ասէ.

Եւ արդ ներգործող ի միտս երեւիր առ խորհուրդս Փողարին,  
Մեծոգոյ Տիգրանայ գեղանին Տիգրանունի,  
Իւր ներածեալ կողաբաղ՝ նաեւ ողջամիտ աշխարհածունի<sup>27</sup>:

Անանուն մեկնիչը Դավթին հիշատակում է նաև «բանի» բացատրության առիթով, նրան վերագրելով «Մարաց և Հայոց պատերազմի» շարադրանքը. «Իսկ բան շարադրութիւն է բառի, յորժամ շարադրէ ոք զԴաւթն զշարադրեացն զպատերազմն եւ զՄարացն եւ զհայոցն եւ ասիցէ յարապէս եթէ «Դաւիթ շարադրեաց զպատերազմն մարաց եւ հայոց», որ է բան»<sup>28</sup>:

Հ. Մանանդյանն աշխատում է պարզել, թե ո՞վ է հուշակավոր այս Դավիթ քերթողը, որին շարունակ հիշատակում է Անանունն իր Մեկնության մեջ: «Ոչ միայն հնարավոր, այլև հավանական է թվում, — գրում է Հ. Մանանդյանը, — որ Անանունի հիշատակած Դավիթ ֆերթողը լինի ֆերականի մեկնության հեղինակ Դավիթ փիլիսոփան»<sup>29</sup>: Այս հարցի լուծումը, ըստ Հ. Մանանդյանի, կարևոր նշանակություն ունի այն պատճառով, որ խորենացին Տիգրան Մեծի պատմությունը գրելիս որպես աղբյուր ունեցել է բանաստեղծական մի գրվածք, որը նա պարզ հիշատակում է և անվանում «Զորս հագներգութիւնք, զարգասաւորին ի բանս...»: Հ. Մանանդյանը նկատի ունի խորենացու հետևյալ տողերը. «Արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել եւ բազում ասել առարկութիւնս բանից, զորոց մեղէն իսկ զհիւսմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաւ ի շորս հագներգութիւնս զարգասաւորին ի բանս եւ զիմաստնոյն իսկ եւ գ'ի մէջ իմաստնոց իմաստնագունին»<sup>30</sup>:

Հետաքրքրականն այն է, որ Հ. Մանանդյանը թեև ենթադրում է, որ խորենացու հիշատակած և կարգացած «շորս հագներգությունների» հեղինակը՝ «իմաստուններից իմաստնագույնը», կարող է կապ ունենալ Անանունի հիշատակած Դավիթ քերթողի և Քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփայի հետ, որոնք նրա կարծիքով VII դարում ապրած հեղինակներ են և կարող են միևնույն անձը լինել, բայց նա որևէ առնչություն չի տեսնում այդ Դավիթների և Անհաղթի միջև:

27 Н. Адонц, *նշվ. աշխ.*, էջ 128—129:

28 նույն տեղում, էջ 138:

29 Հ. Մանանդյան, *Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928, էջ 221:

30 Մ ո վ ս Լ ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 65:

Խորենացու վերոհիշյալ վկայությանը անդրադարձել են նաև այլ բանասերներ, որոնք ջանացել են պարզել «հագներգութիւն» բառի իմաստը և «իմաստուններից իմաստնագույն ու արգասավոր» համարված հեղինակին: Ղ. Ալիշանը, Մ. Աբեղյանը, Ստ. Մալխասյանցը, Ն. Ակինյանը իրավացիորեն նշում են, որ Խորենացու շոքաբար գործածած այս տիտղոսները լիովին համապատասխանում են «Նուամեծ» և «Անհաղթ» Դավիթ փիլիսոփային:

Ղ. Ալիշանը իր մի շարք աշխատություններում<sup>31</sup> անդրադառնալով այս հարցին, ենթադրում է, թե Դավիթ Անհաղթն է Քերականի մեկնիչների հիշած Դավիթ քերթողը, որին վերագրվում է տաղաչափությամբ գրված դուցադնական մի վիպասանություն՝ «Պատերազմն Հայոց և Մարտց»: Այդ վիպասանության մեջ Դավթի դուցազնն է «Հայկազանց ամենէն սիրելի թագաւորն՝ Տիգրան Երուանդեան: Մի կամ երկու տող միայն այդ դուցազներգութենէն ի մէջ բերեն յիշեալ մեկնիչք Քերականի, այն այլ մթին կամ խանգարեալ շարադրութեամբ, որ առաւել իմաստասիրական երևի քան բանաստեղծական»<sup>32</sup>: Ղ. Ալիշանը Դավթին անվանում է ճագներգու կամ Քերթող: Նա նշում է. «Շատ ցանկալի էր գտնել այդ Դավթեան գրուածը, որ մեր ազգի Հոմերոս պիտի համարուէր և քիչ շատ թէ՛ բանաստեղծութեանը ճաշակ մի կ'ունենայինք և թէ՛ տաղաչափութեանը»<sup>33</sup>: Նա մխիթարվում է նրանով, որ երբեմն ունեցել ենք այնպիսի գրվածքներ և այնպիսի գրողներ, որոնց մասին Խորենացին վկայում է որպէս «իմաստնոց իմաստուն» և բախտավոր է համարում իրեն, որ արժանի է եղել կարգալու այդպիսի ազգահռչակ Հագներգութիւններ:

Մ. Աբեղյանն այս հարցին անդրադարձել է հանգամանորեն<sup>34</sup>. «Այդ «արգասաւորին ի բանս», — գրում է Մ. Աբեղյանը, — մեր Պատմագրի ժամանակ շատ հայտնի մի հեղինակ պիտի եղած լինի և հանրածանոթ, և ծանոթ նույնիսկ Սահակ Բագրատունուն, որ Պատմագիրը նրա անունը չի տալիս: «Հագներգութիւն» բառը, որ սովորաբար նշանակում է քերթված, վիպասանություն և քերթվածի մասերը, ցույց է տալիս, որ այդ գրվածքը եղել է մի «բանահայտութիւն», որի համար իբրև նյութ ծառայած էր Տիգրանի պատմությունը»<sup>35</sup>:

Ստ. Մալխասյանցը հետևյալ կերպ է հիմնավորում իր տեսակետը. «Ո՞վ է այս իմաստուն, իմաստունների մեջ իմաստնագույն և բազմարդյուն (=արգասաւոր ի բանս) հեղինակը, որի շորս հագներգութիւնները կարգալու բախտ է ունեցել Խորենացին: Թվում է, թե Դավիթ «Անհաղթ» փիլիսոփայն է, որին մի անգամ էլ անորոշ կերպով հիշել է Ա. զլխում. «մի ոմն ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ», որ իր մասին ասում է՝ «էի ի մէջ յունաց զիմաստութիւն վարժելով»: Այսպէս ենթադրելու հիմք ծառայում է նաև այն, որ բացի Դավիթ Անհաղթից ուրիշ մարդ չգիտենք Յ դարում, որին հարմար էր այդպէս շոքաբար գործածված իմաստուն տիտղոսը: Երկրորդ՝ որ արդարև Դա-

31 Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկը Հայրենաց Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1870, էջ 115: նույնի՝ Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 557: նույնի՝ Սիսական, Վենետիկ, 1893, էջ 316: նույնի՝ Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 42—43:

32 Ղ. Ալիշան, Հայաստանում, էջ 42:

33 նույն տեղում:

34 Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ յոդովրդական առասպելները, Վաղարշապատ, 1901, էջ 379—510, հատկապէս էջ 410—445՝ «Հիւսումն պիտոյից», «Չորս հագներգութիւնք»:

35 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականութեան պատմություն, գիրք առաջին, էջ 272—275:

վիթ Անհաղթից մնացել են շատ երկասիրություններ, որոնց պատճառով իրավացի է նրան կոչել «արգասաւոր ի բանս»: Երրորդ՝ որ գտնված է քերթվածի մի պատառիկ, երեք տողից բաղկացած, նվիրված Տիգրանին և Տիգրանուհուն, այսինքն այն անձերին, որոնց ժամանակի ներբողն է եղել շորս հագներգությունների նյութը (որովհետև խորենացու խոսքը, թե այստեղ պետք է մեծ գործ կատարենք, չի կարող վերաբերել Պարույրին կամ Սկայորդուն, որոնց մասին շատ քիչ բան է գրում, այլ հատկապես Տիգրան Երվանդյանին): Իսկ այդ երեք տողերը փայլեցնում են Դավիթ Անհաղթի լեզուն և ոճը»<sup>36</sup>:

«Հագներգութիւն» բառը, որ հուն. ῥαψωδία-ի պատճենումն է, առաջին անգամ գործածվել է Թրակացու «Քերականության» հայերեն թարգմանության մեջ. «Հագներգութիւն է մասն քերդածաց...: Եւ ոգեալ է հագներգութիւն ի հագնելոյ կարկատուն բանս, եւ կամ ի սարդենի մահակէ պար գոլով երգել զհոմերական քերդածան»<sup>37</sup>: Ինչպես ցույց է տալիս բառի բացատրությունը, «հագներգութիւն» նշանակել է «մեծ քերթության մաս, քերթված, տաղ, վեպ, կամ վիպասանություն»: Բառը ստուգաբանվում է հին հույների մոտ եղած այն սովորությամբ, որ հագներգողները կարկատուն բաներ հագնելով և կամ սարդենի զավազանը ձեռքին պար գալով Հոմերոսի քերթություններից հատվածներ են երգել: Այստեղից «հագներգութիւնը» ստացել է երկրորդ իմաստը՝ Հոմերոսի մասնավոր քերթվածները, շափավոր, ոչ կարճ և ոչ լի տողերով, ինչպես «Իլիականի» ու «Ոդիսականի» երգերը, որոնք կոչվել են «հոմերական հագներգություններ»: Բառի այս իմաստով գործածությանը հանդիպում ենք Անհաղթի՝ «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի» աշխատության մեջ. «Վասն զի նովաւ ցնդաբար բերեցելոց հոմերականաց հագներգութեանցն կամ եղեւ նմա ժողովել զամենայն տաղս հոմերականս»<sup>38</sup>:

«Հագներգութիւն» նշանակում է նաև «պատմական գրվածք ու նրա մասերը, գրքի մաս, գլուխ, ճառ»: Հայկազյան բառարանի հեղինակները այս վերջին իմաստի տակ են դնում խորենացու «րնթեռնուլ արժանաւորեցաք ի շորս հագներգութիւնս» օրինակը, իսկ Ղ. Ալիշանը, Մ. Աբեղյանը և Սա. Մալխասյանցը «հագներգութիւնը» բացատրում են որպես «եռկար քերթվածի մաս, քերթված, վիպասանություն»:

Դավիթ Անհաղթի երկերում բազմաթիվ առիթներ ունենք համոզվելու, որ նա որպես «քերթող» խորապես գիտե հին հունական դիցաբանությունն ու առասպելաբանությունը, հույն քերթողներին, ոչ միայն Հոմերոսին, այլև մյուս բանաստեղծներին, ինչպես՝ Կալլիմաքոսին, Թեոգնիսին, Ապոլլոդորին, Պինդարոսին, Եվրիպիդեսին և շատ ուրիշների, որոնց հաճախ հիշատակում է կամ նրանցից թարգմանաբար մեջբերումներ է անում: Օրինակ, «Սահմանք իմաստասիրութեան» երկի մեջ Դավիթը բերում է Պյութիա հարցուկի պատասխանը Լիկուրգոս օրենսդրին ու փիլիսոփային, որը գնում է դելփյան մեհյանը պատգամ հարցնելու:

<sup>36</sup> Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի, Պատմություն Հայոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 332, ծան. 48:

<sup>37</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 4:

<sup>38</sup> Դ ա Վ Ի Թ Ա ն Յ ա Ղ Թ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, Երևան, 1976, էջ 6:

Արդ եկիր, ո՛վ Լիկուրգէ, յիմ հենհերալիւ տանարս,  
Յերկրայս գոմ, թէ գի՞նչ առասացից զքեզ, աստուած՝ թէ մարդ,  
Իայց սակայն աստուած առասացից զքեզ, ո՛վ Լիկուրգէ<sup>39</sup>:

Նույն «Սահմանքի» մեջ Անհաղթը թարգմանում է հույն բանաստեղծ Քեոզնիսի «էլեգիաներից» պատանի Կյուռնոսին ուղղված հետևյալ տողերը.

Պարտ է յաղփատութենէ փախչել և ի մեծակիտեղն անկանել ի ծով  
Եւ ի վիմաց, ով Կիւռնէ, հոսիլ յարեգակնակոխ<sup>40</sup>:

Թրակացու «Քերականության» մեջ «հասարակ վանկի» մասին խոսելիս քերականը բացատրում է, որ այն լինում է երեք տեսակ և յուրաքանչյուր տեսակի համար որպես օրինակ բերում է Հոմերոսի քերթվածներից մեկական՝ տող: «Հոմերական այգ տողերը» Անհաղթը թարգմանում է այսպես.

«Ինձ բնաւ ես ոչ դու իրիմ պատնառ, արեւ, այդ աստուածքն»<sup>41</sup>:

«Պատրոկղէ ինձ հիֆիս կարի յոյժ սիրեցեալ անձին»<sup>42</sup>:

«Ձնեստոր ոչ խաբեաց խաւշին թէպէտ եւ յումպ էր»<sup>43</sup>:

Դավիթ Անհաղթի «Երկերի» աշխարհաբար թարգմանության ծանոթագրությունների բաժնում «որպէս եւ քերթութիւն յայտ առնէ վասն բարոյն» նախադասության «ֆերթութիւն» բառի մասին Ս. Արևշատյանը գրում է. «Այստեղ, ինչպես և բոլոր մյուս դեպքերում, հիշատակելով վիպերգությունը, քերթությունը, քերթողին և բանաստեղծին, Դավիթ Անհաղթը նկատի ունի Հոմերոսին և նրա ստեղծագործությունները»<sup>44</sup>:

Կարծում ենք այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ V դարում ապրած Դավիթ Քերթողը նույն Դավիթ Անհաղթն է:

Մատենագրական տեղեկությունները, ինչպես տեսանք, Դավիթ Հարթացուն և Դավիթ Ներգինացուն նույն անձն են համարում:

Գ. Տեր-Մկրտչյանը, հրատարակելով Դավիթ Հարթացու անունով պահպանված ձեռագրական մնացորդները, Հարթացու անձնավորության մասին հանգում է հետևյալ եզրակացություններին. 1. Հարթացին Հերետնացի է կոչվել ծնված գյուղի անունով և Ներքինացի՝ Ներքնավանքի, ըստ ավանդության՝ թաղված տեղի անունով: Նա առասպելյալ անձնավորություն չէ, ինչպես կարծել են նորագույն քննադատները: 2. Հարթացին կրոնական և փիլիսոփայական գրող է, մասնակցել է իր ժամանակի աստվածաբանական վեճերին, ուրեմն միաբնակ է: 3. Հարթացին է պարագլուխը այն մեծ հունաբան դպրոցի, որի գլխավոր արտադրություններն են... փիլիսոփայական գրությունները, լինեն բնագիր թե թարգմանություն, աստվածաբանական և մեկ-

39 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 40:

40 Նույն տեղում, էջ 74: Տե՛ս նաև՝ Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980, էջ 309, ծան. 57:

41 Н. АЛОНЦ, նշվ. աշխ., էջ 11:

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում, էջ 12:

44 Դավիթ Անհաղթ, Երկեր, էջ 306, ծան. 36:

նաբանական դրվածքներ և այլն: 4. Նա հավանաբար գրել է թե՛ հայերեն և թե՛ հունարեն, գործունեության տեղը եղել է Արևելքը՝ Հայաստան, Ալեքսանդրիա, բայց ոչ Աթենք<sup>45</sup>:

2. Մանանդյանը, առարկելով Դավիթ Հարթացու մասին բանասիրության մեջ մինչ այդ եղած տեսակետին, նշում է, որ «հայոց մատենագրական ավանդության հետևությամբ՝ նորագույն հայ բանասերներից շատերն ևս շփոթել են նորադատոնական Դավիթ Մեկնիչին Դավիթ Հարթացու հետ և, ընդունելով Դավիթ Մեկնիչին իբրև հայ հեղինակ՝ կարծել են, որ Դավիթ վերոհիշյալ իմաստասիրական երկերը թարգմանությունն չեն, այլ գրված են եղել հայերեն: Արդ՝ այս կարծիքը միանգամայն սխալ է»<sup>46</sup>: 2. Մանանդյանի կարծիքով «Սահմանք իմաստասիրութեան» երկի, Պորփյուրի «Ներածութեան» և Արիստոտելի «Վերլուծականքի» մեկնությունների հեղինակը Դավիթ Հարթացին չէ, պատճառաբանելով, որ ա) Միաբանի հրատարակած «Դավիթ Հարթացույ եւ փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս» մնացորդը թե՛ ոճով, թե՛ բովանդակությամբ, թե՛ փիլիսոփայական ուղղությամբ միանգամայն տարբեր է նորադատոնական Դավիթ Մեկնիչի երկերից. բ) այս երկի բոլոր հարցերն ու պատասխանները խորթ և անհամապատասխան են Դավիթ Մեկնիչի իմաստասիրական հասկացողություններին. Հարթացու իմաստասիրական հարցվածքների գրեթե ամեն մի էջում նկատելի են Փիլոնի ազդեցության հետքեր, ինչպես այդ ճիշտ նկատել է Դ. Տեր-Մկրտչյանը, իսկ նորադատոնական Դավիթ Մեկնիչի գրվածքներում Փիլոնի ազդեցության և ոչ մի նշան չկա. գ) Դավիթ Հարթացու գրեթե ամեն մի հարց ու պատասխանից երևում է նրա քրիստոնյա լինելը, մինչդեռ նորադատոնական Դավիթ փիլիսոփայի գրվածքների միայն մանրախույզ և երկար քննությունից հետո հաջողվել է նրան Դավիթ քրիստոնյա լինելու մի փոքր հետք գտնել: Այս բոլորից ելնելով, 2. Մանանդյանը եզրակացնում է. «Դավիթ Հարթացի հայ վավերական հեղինակը և նորադատոնական Դավիթ փիլիսոփան տարբեր անձնավորություններ են: Այս բացասական եզրակացությամբ մեկնիչ Դավիթ անձնավորության վերաբերյալ առեղծվածի լուծումն ավելի դժվարանում է»<sup>47</sup>:

Մեր կարծիքով 2. Մանանդյանի առարկություններն ու բացասական եզրակացությունն այս հարցում հիմնավոր չեն:

Նախ՝ նկատենք, որ երկու Դավիթներն էլ փիլիսոփա են, հայ և քրիստոնյա: Նույն աշխատության շարունակության մեջ 2. Մանանդյանն ինքը հաստատում է Դավիթ Մեկնիչի քրիստոնյա լինելը (տե՛ս § 9) «Նուրպղատոնական Դավիթ Մեկնիչը քրիստոնյա է» վերնագրի տակ:

Երկրորդ՝ նորադատոնական Դավիթ Մեկնիչը նույնպես ծանոթ է Փիլոնին: Անհաղթն իր «Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտէլի» աշխատության մեջ խոսելով հասարակ հավաքաբանության էության մասին, գրում է. «Հենց դրանումն է և հավաքաբանության էությունը, որպեսզի այն բաների միջոցով, որոնց բացահայտ ցուցադրում է բնությունը, հնարավոր լինի

<sup>45</sup> Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Դավիթ Հարթացի, էջ 937—938:

<sup>46</sup> 2. Մանանդյան, Ուսումնասիրություն Դավիթ Հարթացի փիլիսոփային վերագրված իմաստասիրական երկերի, էջ 564:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 171:

գտնել այն, ինչ նա թաքցրել է մեզնից, նմանվելով խուզարկու կոշվող շներին, որոնք իմանում են, այսինքն շավիղներով և հոտերով գտնում են գազանների որջերը»<sup>48</sup>:

Ս. Արևշատյանը, ծանոթագրելով Անհաղթի «Վերլուծականքի» այս նախադասությունը, գրում է. «Տվյալ միտքը և հետագա շարադրանքը վկայում են այն մասին, որ Դավիթը ծանոթ է Փիլոն Ալեքսանդրացու «Վասն բան ունել անասուն կենդանեաց» («Կենդանիների բանականությունն ունենալու մասին») աշխատությանը, որը հայերեն է թարգմանվել V դարում: ...Դավիթը համամիտ է Փիլոնին և գտնում է, որ կենդանիները զուրկ են բանականությունից»<sup>49</sup>:

Դավիթ Անհաղթը կամ Մեկնիչը, ինչպես նրան անվանում է Հ. Մանանդյանը, չէր կարող ծանոթ չլինել Փիլոնի գործերին, որոնք V դարում այնքան հռչակված էին Ալեքսանդրիայում և հայերեն էին թարգմանվել նույն դարի կեսերին: «Տարակույս չի մնար,— գրում է Գ. Զարբհանալյանը,— որ հինգերորդ դարու թարգմանություն է (Փիլոն) և հավանաբար Խորենացվույն կամ իրեն ուսումնակցաց՝ Մամբրեի կամ Անհաղթի, հանդիպելով Փիլոնի գրվածոց ի Աղեքսանդրիա, ուր այնչափ հռչակված էր իր անունը և մեծարյալ երկասիրությունքն»<sup>50</sup>:

Հ. Մանանդյանը ինքը ևս Փիլոնի երկերի հայերեն թարգմանությունները համարում է հունաբան դպրոցի առաջին թարգմանություններից: Նա բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս Թրակացու «Քերականության» ու Փիլոնի գործերի հայերեն թարգմանությունների բառապաշարի սերտ առնչությունը, իսկ Թրակացու «Քերականության» հայ թարգմանիչը, ինչպես տեսանք, Դավիթ Անհաղթն է: Հետևաբար, Դավիթ Մեկնիչը կամ Անհաղթը շատ յավ ծանոթ է Փիլոնի գործերին:

Երրորդ՝ Դավթի գործունեության մեջ պետք է տարբերել երկու շրջանա՝ ա) հունական գիտական կենտրոններում, հատկապես Ալեքսանդրիայում եղած շրջանը, V դարի կեսից առաջ, երբ նա սովորել է «քերթողական արվեստը» և ղեկավար համապատասխան դասագրքերի թարգմանությամբ ու մեկնությամբ, երկար տարիներ հունարեն լեզվով դասավանդել է փիլիսոփայություն և նրա դասախոսությունները գրի են առնվել իր աշակերտների կողմից: Հետևաբար, այս շրջանում պետք է գրված լինեն նորալատոնական ալեքսանդրյան ուղղության ներկայացուցիչ Դավթի փիլիսոփայական աշխատությունները, որոնցից երեքի հունարեն բնագրերը նույնպես պահպանվել են: Հասկանալի է, որ այդ աշխատությունների հայերեն օրինակները թարգմանություն են հունարենից. բ) ետալեքսանդրյան շրջան, V դարի կեսից հետո, երբ Հայաստանում լուսավորական-գիտական գործունեություն ծավալելու հետ միասին Դավիթ Անհաղթը չէր կարող չմասնակցել այդ ժամանակ քրիստոնեական աշխարհում, նաև Մերձավոր Արևելքում և Հայաստանում ծավալված դավանաբանական սուր վեճերին, հայ եկեղեցու՝ ներքին և արտաքին թշնամիների դեմ մղած գաղափարական պայքարին: Այդ պատճառով այս շրջանում Դավթի որոշ գրությունների բովանդակությունը եղել է փիլիսոփայ-

48 Դավիթ Անհաղթ, Երկեր, էջ 254:

49 Նույն տեղում, էջ 322, ծան. 9:

50 Գ. Զարբհանալյան, Հայկական թարգմանությունք նախնյաց, Վենետիկ, 1889, էջ 747—748:

յական-աստվածաբանական, մանավանդ, որ նա կյանքի վերջում ընդունել է հոգևոր կոչում: Երկրորդ շրջանի երկերը Հարքացին գրել է հայերեն. բնականաբար, դրանց լեզուն եղել է շատ ավելի հասկանալի, քան առաջին շրջանի գործերինը: Ահա թե ինչու Դավթի երկու շրջանների երկերն իրենց ոճով, բովանդակությամբ և նպատակաուղղվածությամբ տարբերվում են: Ուստի, Հ. Մանանդյանի առարկություններն այն մասին, որ Հարքացու «Իմաստասիրական հարցվածներն» իրենց ոճով, բովանդակությամբ և փիլիսոփայական ուղղությամբ անհամապատասխան են նորպլատոնական Դավիթ Մեկնիչի իմաստասիրական հասկացողություններին, հետևաբար, Դավիթ Հարքացին և Դավիթ Ներգինացին տարբեր անձնավորություններ են, հիմնավոր չեն: Պարզ է, որ մատենագրական տեղեկությունները և դրանց հետևող բանասերները չեն սխալվում նույնացնելով Դավիթ Հարքացուն և Դավիթ Ներգինացուն:

Գ. Հովսեփյանը նույնացնում է Դավիթ թարգմանիչ Տարոնացուն Դավիթ Հարքացու հետ, որին նա համարում է VII դարի մատենագիր<sup>51</sup>: Իսկ Ն. Ակինյանը գրում է. «Հարք գավառը կը պատկաներ Տուրուբերան նահանգին: Իսկ Տուրուբերան կը կոչվեր նաև «Տարոնոյ աշխառհ»: Ուստի Հարքացի մը կարող էր նահանգի անունով «Տարոնացի» ալ նկատվիլ և Տարոնացին «Մամիկոնյան» համարվիլ»<sup>52</sup>:

Այսպիսով, Դավիթ Անհաղթի անձնավորության «առեղծվածը» լուծելու նպատակով տարբերակված Դավիթներից նույն անձնավորությունը պետք է համարել Դավիթ Անհաղթին, Դավիթ Քերականին, Դավիթ Քերթողին, Դավիթ փիլիսոփային, Դավիթ թարգմանչին, Դավիթ Մեկնիչին, Դավիթ Հարքացուն, Դավիթ Ներգինացուն, գուցե և Դավիթ Տարոնացուն, տարբերելով Դավիթ Բագրևանդացուց և Դավիթ Հյուպատից:

Դավիթ Անհաղթի «առեղծվածի» լուծմամբ ղբաղվող բանասերներն ամենից շատ անդրադարձել են նրա ժամանակի հարցին: Քննական բանասիրությունը մատենագրական տեղեկությունները «վիպախառն առասպել» համարելով, ջանաց ճշտել նաև Դավթի ժամանակը: Խորենացու նման, Անհաղթին էլ տեղահան անելով V դարից, բանասերները նրան փոխադրեցին մերթ՝ V դարի վերջը, VI դարի առաջին կեսը, մերթ՝ VI և մերթ՝ VII դարեր: Կանգ շանելով առանձին տեսակետների վրա, նշենք, որ ուսումնասիրողների զգալի մասը Դավթի ժամանակը որոշում է V դարի վերջին, VI դարի առաջին կեսին, հենվելով այն բանի վրա, որ Անհաղթն իր «Սահմանք իմաստասիրութեան» գրքում երկու անգամ հիշատակում է Օլիմպիոգորոսի անունը: Նկատի ունենալով, որ Դավիթ Անհաղթը Ալեքսանդրյան նորպլատոնական դպրոցի ներկայացուցիչ է, իսկ V—VI դդ. Ալեքսանդրիայում նույն փիլիսոփայական ուղղության կարկառուն ներկայացուցիչներ են եղել Հերմիասի որդի Ամոնիոսը, Օլիմպիոգորոս կրտսերն ու էլիասը, որոնց և Դավթի մեկնություններում իմաստասիրական գաղափարների ընդհանրություն է նկատվում, ուսումնասիրողները ենթադրում են, որ Դավիթը հիշատակում է կրտսեր Օլիմպիոգորոսին: Վերջինս եղել է Ամոնիոսի աշակերտներից և VI դարի սկզբում Հուստինիանոս կայսեր ժամանակ դասախոսել է Ալեքսանդրիա-

51 Գ. Հովսեփյան, Դավիթ փիլիսոփա (Հարքացի) է դարու մատենագիր, Վաղարշապատ, 1907, էջ 93:

52 Ն. Ակինյան, նույն տեղում, էջ 71:

յում: Ուրեմն՝ նրան աշակերտած Դավթի երկերն էլ պետք է գրված լինեն VI դարի առաջին կեսին:

Ճիշտ է, որ Դավթի Անհաղթն իր «Սահմանք իմաստասիրութեան» երկի մեջ երկու անգամ հիշատակում է Օլիմպիոդորոս փիլիսոփային, բայց նա կրտսեր Օլիմպիոդորոսի մասին որևէ ակնարկություն չի անում: Ահա այդ նախադասությունները. «Եւ որպէս ասէր Ոլիմպիոդորոս փիլիսոփոս, եթէ սքանչելի իմն հնարս եգիտ բնութիւնս, նուազութիւն հարստացեալ եւ հարստութիւն կեղծաւորեալ զնուազութեանցն»: «Առ այսոսիկ ասաց Ոլիմպիոդորոս փիլիսոփոս, թէ ոչ պղատոնական գիրն զիմս նահանջէր զյարձակումն, այն ինչ ահա տաժանաբար լուծանէի զյոզնաթախանձ կապ կենցաղոյս»<sup>53</sup>: Հ. Մանանդյանը ենթադրում է, թե այս նախադասությունների մեջ առաջ են բերվում կրտսեր Օլիմպիոդորոսի իմաստասիրական բնորոշ բացատրությունները, առաջինում՝ սահմանի բառական արտաքին կազմության մասին, երկրորդում՝ թե ինչպես պետք է հասկանալ Փեդոնի տրամաբանության մեջ Պլատոնի տված այն որոշումը, թե «իմաստասիրութիւն է խոկումն մահու», և ավելացնում. «Ոլիմպիոդորոսին վերագրված կարծիքները հարկավ պետք է որոնել նրա մեկնական գրվածքներում»<sup>54</sup>: Դժբախտաբար, Հ. Մանանդյանը նման որոնում չի կատարում և արդեն ապացուցված համարելով Դավթի՝ կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտ լինելը, շարունակում է. «Ընդունելով որ Դավթը Մեկնիչը կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտն է՝ արդեն *a priori* խիստ հավանական կլինէր կարծել, որ նոցա իմաստասիրական դաստիարակումներն ու մեկնությունները մեծ մասամբ նման և համաձայն պետք է լինեն, ուստի և, այդ ևս աչքի առաջ ունենալով՝ հարկավոր է համեմատել և քննել նոցա երկերի ներքին բովանդակությունը»<sup>55</sup>: Անկասկած, այդպիսի համեմատությունը հնարավորություն կտար Դավթի ժամանակի մասին ավելի որոշակի խոսել, սակայն այդ չի կատարվել ո՛չ Հ. Մանանդյանի, ո՛չ էլ այս տեսակետի պաշտպաններից որևէ մեկի կողմից: Այստեղ Ստ. Մալխասյանցն այսպես կպատասխաներ Հ. Մանանդյանին. «Տրամաբանորեն սխալ է ապացուցելին ընդունել իբրև ապացույց՝ մի ուրիշ բան ապացուցելու համար»<sup>56</sup>:

Հետաքրքրականն այն է, որ Հ. Մանանդյանը և մյուս ուսումնասիրողներն իրենց ենթադրությունը հաստատում են խորենացու անուղղակի<sup>57</sup> կամ ուղղակի<sup>58</sup> վկայություններով: «Ինձ թվում է,— գրում է Հ. Մանանդյանը,— որ

53 Դավթի Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 38 և 72:

54 Հ. Մանանդյան, Ուսումնասիրություն Դավթի Հարբացի փիլիսոփային վերագրված իմաստասիրական երկերի, «Արարատ», Վաղարշապատ, 1904, էջ 569:

55 Նույն տեղում:

56 Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, էջ 66:

57 Խորենացին նկարագրում է կրտսեր աշակերտների Ալեքսանդրիա մեկնելը ռոսանել զգորութիւն պէսպէս իմաստից ի նորն Պլատոնէ, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ, և ոչ անկատար վարժմամբ ի յանգ ելեալ արուեստից՝ ինքնացայս (Մոզեսի Խորենացի, էջ 343): Ուսումնասիրողների կարծիքով Պատմա՛որ ակնարկած նոր Պլատոնը կամ նորպլատոնական փիլիսոփայության հետևող ուսուցիչը հենց այն Օլիմպիոդորոսն է, որին ինչպես և Դավթին այլ առիթով նա հիշատակում է անվանապես (տե՛ս Վ. Զալոյան, Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 101):

58 «Յաղագս Ողիմպիոդորայ փիլիսոփայի անգիր հին զրուցացն: Բայց պարտ է մեզ զոմանց անգիր հին զրոյցս, որ պատմեալ եղեն վաղ ուրեմն ի մէջ իմաստնոցն Յունաց—եւ 14 Հանդես, № 1



Մովսես Խորենացու հիշած Օլիմպիոզորոս փիլիսոփան ևս նույն այս Ոլիմպիոզորոսն է: Խորենացու ասելով՝ Ոլիմպիոզորոսն այն կատարելագույնն էր իմաստասերների մեջ, որոնց մոտ սովորում էին հայերը փիլիսոփայություն: Այս վկայությունը վերաբերվում է, իմ կարծիքով, ոչ թե V դարի պատմագիր Ոլիմպիոզորոսին, այլ Աղեքսանդրիացի երկու Ոլիմպիոզորոս փիլիսոփաներից մեկին<sup>59</sup>: Հետևաբար, V—VI դդ. երեք հայտնի Օլիմպիոզորոսներ կան՝ V դարի պատմագիրը և ալեքսանդրիացի երկու փիլիսոփաները: Սակայն Հ. Մանանդյանը շարունակում է. Ավելի քան հավանական է, որ Խորենացու վկայությունը վերաբերվում է նույնպատուական Դավիթ Մեկնիչի ուսուցիչ՝ կրտսեր Ոլիմպիոզորոսին: ...Խորենացու խոսքերը՝ «ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար զրոյցս մատենից սային» կարող են վերաբերվել ավելի շուտ նորապատուական մեկնիչ իմաստասերների միջավայրին, քան Ոլիմպիոզորոս պատմագրին: Խորենացու վկայության բոլոր ակնարկները, ինչպես տեսնում ենք, համապատասխան են ու հարմար Դավիթ մեկնիչի ուսուցիչ կրտսեր Ոլիմպիոզորոսի համար՝ նույն Ոլիմպիոզորոսի, որին հիշում են նաև Գրիգոր Մագիստրոսը և Հովհաննես Որոտնեցին<sup>60</sup>:

Բերենք նաև Մագիստրոսի վկայությունը. «Բայց եւ գտեալ մեր իսկ ի հայ լեզու, գրեալ թարգմանչացն՝ զգիրս Ողիմպիոզորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի եւ հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից»<sup>61</sup>: Մագիստրոսը հայտնում է, որ նա գտել է Դավթի հիշատակած Օլիմպիոզորոսի գրքերը հայերեն մեր քաղաքներից կողմից թարգմանված: Այստեղ էլ կրտսեր Օլիմպիոզորոսի մասին որևէ ակնարկություն չկա: Հ. Մանանդյանը ուշադրության արժանի է համարում վկայության

հասին մինչև ի մեզ այս զրոյցը ի Գորգի եւ Բանան անուն կոչեցելոց. եւս երրորդ ոմն Դաւիթ—Թէպէտ եւ յոյժ սակաւութ բրկորդել: Յորոց մի ոմն ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ, ասէր այսպէս, թէ Ո՛վ ծերք, յորժամ էլ ի մէջ Յունաց զիմաստութիւն վարժելով, դէպ եղեւ ի միում աւուր՝ զի վասն աշխարհագրութեանց և բաժանմանց ազգաց ի մէջ արանց իմաստնոց և հմտագունից բան ճառիր, ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար զրոյցս մատենից տային. իսկ որ կատարելագույնն էր ի նոսա, Ոլիմպիոզորոս անուն, այսպէս ասաց. Պատմեցից ձեզ, ասէ, և զրոյցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զորս եւ բազումք ի գեղեկաց զրուցեն մինչև ցայժմ» (Մովսես Խորենացի, էջ 22—24): Ըստ Ստ. Մալխասյանցի, «ոմն Դավիթ»-ը հավանորեն Դավիթ Անհաղթն է, և նա է, որ ավագների ժողովում պատմում է ինչ որ Հունաստանում ուսանած ժամանակ լսել էր գիտնական Օլիմպիոզորոսից: Իսկ Օլիմպիոզորոսի մասին Ստ. Մալխասյանցը գրում է. «Այս Ոլիմպիոզորոսը հույն պատմագիր էր եգիպտոսի Թերե քաղաքից, և ապրում էր Ե դարում հ. Ք... Գրել է պատմություն 407—425 թվականներին պատահած անցքերի: Նրա ապրած ժամանակը և մասնագիտությունը լավ չգիտատու են Դավթի պատմածին՝ թե՛ ժամանակով և թե՛ նյութով» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 326, ծան. 16, 17): Խորենացու վերոհիշյալ վկայությունից ելնելով Ստ. Մալխասյանցը գրում է. «Զուր է ակադ. Մանանդյանն այս Ոլիմպիոզորոսին նույնացնում VI դարի փիլիսոփա Ոլիմպիոզորոսի հետ («Հունարան դպրոց», էջ 41): Այստեղ խոսքն աշխարհագրության և ազգերի բաժանման մասին է. Ոլիմպիոզորոսը հին պատմական զրույցներ է պատմում. որեմն նա V դարի պատմաբան Ոլիմպիոզորոսն է» (Ստ. Մալխասյանց, Խորենացու առիթով շուրջը, Երևան, 1949, էջ 92, ծան. 1):

<sup>59</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 41:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 41—42:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 39—40:

այն մասը, որ գտնված թարգմանությունը Դավթի հիշատակած Օլիմպիոդորոսի աշխատությունն է, սակայն սխալ՝ այն տեղեկությունը, որ այդ թարգմանությունը «թարգմանչաց» գործ է համարում, «եթե «թարգմանչաց» տակ հասկանանք Սահակ-Մեսրոպի աշակերտներին»<sup>52</sup>, Իսկ Մագիստրոսի հիշյալ վկայության «զգիրս Ողիմպիոդորոսի, զոր Դավթ յիշատակէ» հատվածի մասին Հ. Մանանդյանը նշում է. «Կարծում ենք, որ էլիասին ընծայված Ստորոգությանց մեկնության հենց այն հայերեն թարգմանությունն է, որից քաղվածորեն օգտվել է Հովհաննես Որոտնեցին»<sup>53</sup>, Այս հարցում ևս Հ. Մանանդյանը սխալվում է: Արիստոտելի «Ստորոգությանց» մեկնությունը երկար ժամանակ սխալմամբ վերագրվում էր էլիասին: Ս. Արևշատյանը հերքեց այդ կարծիքը և ապացուցեց, որ այդ երկը նույնպես պատկանում է Դավթ Անհաղթին<sup>54</sup>:

Հ. Մանանդյանը կարող էր հորենացու վկայությունը «համապատասխան» գտնել Դավթ Մեկնիչի ուսուցիչ կրտսեր Օլիմպիոդորոսի համար, որովհետև նա հորենացուն համարում է ոչ թե V, այլ IX դարի մատենագիր: Սակայն Պատմահոր այս տեղեկությունների վրա հենվում են նաև այլ ուսումնասիրողներ, որոնք նույնպես Դավթին համարում են կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտ: Վ. Չալոյանը, վկայակոչելով հորենացու պատմածը Օլիմպիոդորոսի ու Դավթի մասին, գրում է. «Թե ովքեր են Գորգին և Բանանը, մեզ հայտնի չէ: Բայց այդ խմբից երրորդը, Դավթը, որի միջոցով հունական իմաստունների պատմազրույցները հասել են Մովսես հորենացուն, ինչպես մեզ թվում է, Դավթ Անհաղթն է: Այն մարդը, որը եղել է հույների մեջ, ուսումնասիրել է փիլիսոփայություն, հիացմունքով է արտահայտվել իր ալեքսանդրյան ուսուցիչ Օլիմպիոդորոսի մասին և նրա գաղափարները հասցրել իր հայրենակիցներին, կարող էր լինել միայն Դավթ Անհաղթը»<sup>55</sup> և եզրակացնում է. «... Մովսես հորենացու օգնությամբ հաստատվում են վերը հիշատակված ավանդության մի շարք դրույթներ Դավթի և Մովսեսի մասին»<sup>56</sup>: Եթե Վ. Չալոյանն ընդունում է ավանդության մի շարք դրույթներ, ապա հորենացուն և Անհաղթին նա պետք է համարի ժամանակակիցներ՝ V դարի մատենագիրներ: Սակայն աշխատության հաջորդ էջերում նա ևս Դավթին համարում է կրտսեր Օլիմպիոդորոսի աշակերտ: Հարց է ծագում. եթե հորենացու վկայությունները Դավթի և Օլիմպիոդորոսի մասին ճիշտ են, եթե Պատմահոր և Անհաղթի հիշատակած Օլիմպիոդորոսը նույն անձնավորությունն է, ապա V դարի մատենագիրներ հորենացին ու Անհաղթը ինչպե՞ս կարող էին աշակերտել VI դարի սկզբին, Հուստինիանոս կայսեր ժամանակ Ալեքսանդրիայում դասախոսող կրտսեր Օլիմպիոդորոսին: Պարզ է, որ հորենացին ու Անհաղթը ոչ թե աշակերտել, այլ ղախտեղել են կրտսեր Օլիմպիոդորոսին: Հետևաբար, նրանց հիշատակած Օլիմպիոդորոսը չի կարող կրտսերը լինել: Առավել հավանական է, որ նա V դարի պատմագիր Օլիմպիոդորոսը

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>53</sup> Նույն տեղում:

<sup>54</sup> Տե՛ս Ս. Արևշատյան, Դավթ Անհաղթի ժառանգությունը նոր լուսաբանությամբ, «Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 7—22:

<sup>55</sup> Վ. Չալոյան, Հայոց փիլիսոփայության պատմություն, էջ 100—101:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 101:

լինի: Ինչ վերաբերում է Դավիթ և կրտսեր Օլիմպիոդորոսի հայացքների միջև եղած գաղափարական ընդհանրությանը, ապա նախ՝ երկուսն էլ փիլիսոփայական նույն ուղղության գաղափարախոսներ են: Երկրորդ՝ Դավիթ Անհաղթը երկար տարիներ Ալեքսանդրիայում հունարեն լեզվով փիլիսոփայություն է դասախոսել, նրա փիլիսոփայական երկերը նախապես գրվել են հունարեն և այդ բնագրերը պահպանվել են: Հետևաբար, շատ հավանական է, որ այդ ընդհանրությունը արդյունք լինի ոչ թե կրտսեր Օլիմպիոդորոսի՝ Դավթի վրա ունեցած ազդեցության, այլ ընդհակառակը, Դավիթ Անհաղթի՝ կրտսեր Օլիմպիոդորոսի վրա ունեցած ազդեցության:

2. Մանանդյանը բանասերների ուշադրությունը հրավիրում է նաև այն հանգամանքի վրա, որ Արիստոտելի «Վերլուծականքի» մեկնության հայերեն բնագրում Դավիթը հիշատակում է Ամոնիոս, Եվդոկիոս և Ալեքսանդրոս մեկնիչներին: Այս մեկնիչները, որոնք նույնպես ալեքսանդրյան նորպլատոնական դպրոցի ականավոր ներկայացուցիչներ են, եղել են Դավթի ոչ թե ավագ, այլ կրտսեր ժամանակակիցներ: Հերմիասի որդի Ամոնիոսը ապրել է V դարի երկրորդ կեսում, VI դարի սկզբում, եղել է կրտսեր Օլիմպիոդորոսի ուսուցիչը: Եվդոկիոս Ասկալոնացին եղել է հույն փիլիսոփա և մաթեմատիկոս Ամոնիոսի աշակերտը, իսկ Ալեքսանդրը եղել է Եվդոկիոսի և Օլիմպիոդորոսի աշակերտը: 2. Մանանդյանը եզրակացնում է, որ «Ամոնիոսի աշակերտ՝ Ե—Ձ դարի մեկնիչ Եվդոկիոսին հիշող նորպլատոնական Դավթին ինքը Ձ-րդ դարի մատենագիր պետք է լինի»<sup>67</sup>, սակայն այս հարցում, մեր կարծիքով, ավելի ճիշտ է նրա մյուս հետևությունը. «Այս բոլոր մեկնիչները ժամանակով իրար այնքան մոտ են, որ միևնույն տեղի և միևնույն շրջանի մեկնիչներ միայն կարող են լինել»<sup>68</sup>:

Չեռագրական հիշատակարանները և բանասիրությունը Դավիթ Անհաղթին են վերագրում «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» ճառը: Դավթի ժամանակը որոշելու հարցում այս ճառը փաստացի հիմք է ծառայում, որովհետև նրան կից պահպանվել են նաև «Թուղթ Գիւտայ առ Դավիթ» (որով Գյուտ կաթողիկոսը (461—476 թթ.) խնդրում է Դավթին այս ճառը գրել) և Դավթի պատասխանը Գյուտին: Ներբողյանի նախադրության մեջ բացատրվում է նրա գրության շարժառիթը՝ Գյուտի և Դավթի պայքարը իրենց ժամանակ Հայաստան ներթափանցած աղանդավորների դեմ. «Յաւուրս վերադիտողութեան Հայոց տեառն Գիւտայ եկին արք ոմանք ի նահանգէն Անտիոքայ ի գեղջէն որ կոչի Աւշին, որոց անուանքն Կոստանդին և Պետրոս և Թէոդորէ. ...որք ասէին ոչ գոլ զՄարիամ՝ Աստուածածին, և ոչ զԽաչն՝ Աստուծոյ խաչ, այլ գողոց պատժարան: Իբրև լուաւ Գիւտ զգալն Դաւթի և զընկերացն, բերկրեցաւ եւ մխիթարեցաւ յոգի, եւ գրեաց առ Դաւթ նամակ, որ ունէր օրինակ զայս»<sup>69</sup>:

«Խաչի ներբողյանը» գրված է Դավթին հատուկ հոետորական արվեստով, վսեմ ոճով: Ծառի փիլիսոփայական ու աստվածաբանական բովանդա-

67 2. Մանանդյան, Ուսումնասիրություն Դավիթ Հարթացի փիլիսոփային վերագրված իմաստասիրական երկերի, էջ 574:

68 Նույն տեղում, էջ 575:

69 «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ Թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւթ», Վենետիկ, 1932, էջ 6:

կուսությունը, հարուստ լեզուն, հունաբան, նախածանցավոր կազմությամբ բազմաթիվ նորակերտ բառերը, խրթնաբանությունները ապացուցում են, որ այն իրոք պատկանում է Դավիթ Անհաղթին:

Նոր հայկազյան բառգրքի հեղինակները Անհաղթին վերագրելով այս ճառը Անյաղթ. բառօր. համառոտագրությունը ծանոթագրում են այսպես. «Սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Հարբացոյ կամ Ներգինացոյ, յաշակերտութենէ սրբոց թարգմանչաց, ճառ պանծալի և վսեմ ի սուրբ խաչն, որոյ սկիզբն է Բարձրացուցէք. ուր կան և հետք հելլենաբանութեան»<sup>70</sup>:

Սույն Մ. Ավգերյանը, շատ բարձր գնահատելով այս ճառը, ենթադրում է, որ Դավիթն ու իր ընկերները պետք է ունեցած լինեն նաև այլ գործեր, որոնք մեզ չեն թաքել. «Ճառ խաչին է գերապանծ և վսեմ յօրինուած աթենական ոգոյ ցուցակ. յորմէ իմանամք, թէ և այլ բազմադիմի գործք երանելոյն Դաւթի և ընկերաց նորա պարտին լինել, որք այժմ չերեւին»<sup>71</sup>:

Դավիթ Անհաղթի ժամանակը որոշվում է նաև նրա երկերի լեզվական առանձնահատկությունների համեմատությամբ: Այս տեսակետից առավել բնորոշ են Թրակացու «Քերականության» հայերեն թարգմանության լեզվական առանձնահատկությունները: Հ. Մանանդյանն իրավացիորեն նկատում է, որ հունարեն բարդ բառերի թարգմանությունը դասական հայերենի բառերով կամ բառաբարդման կանոնների համաձայն, թարգմանչի վարանումներն ու անվճռականությունը քերականական տերմինների և նախածանցներով կազմված բառերի թարգմանության ժամանակ, նախածանցների թարգմանությունը հայերեն տարբեր նախածանցներով արդյունք են դեռևս հունաբան որոշ ու հաստատուն բառապաշարի բացակայության և ապացուցում են, որ այդ թարգմանությունը կատարվել է դասական հայերենից հունաբան հայերենին անցման շրջանում, V դարի կեսերին: Այս երկի թարգմանիչը և նրա հնագույն մեկնության հեղինակը, ինչպես ցույց ենք տվել, Դավիթ Անհաղթն է:

Զեռագրական հիշատակարանները Դավիթ Անհաղթին են վերագրում նաև «Պիտոյից գիրքը»: Նույնը հաստատում են «Պատճառաց գիրքը», Սյունյաց դպրոցի ներկայացուցիչները և հատկապես Առաքել Սյունեցին (տես սույն հոդվածի սկզբում Առաքել Սյունեցու «Մեկնութիւն Սահմանաց գրոց» Պատճառի մեջ): Գ. Հովսեփյանը, ուսումնասիրելով այդ երկի լեզուն, եզրակացնում է, որ «Պիտոյից գիրքը յուր ամբողջությամբ մի հեղինակի գործ չէ. բացի Մովսես քերդողից, այնտեղ մասն ունին Դավիթ փիլիսոփա Հարբացին և Խոսրովիկ թարգմանիչը»<sup>72</sup>: Նա նկատում է, որ տեսական մասի ու բնաբաններից մի բանիսի թարգմանությունը մի մարդու գործ է, և այդ անձը, վերջաբանի վկայությամբ, Մովսես քերդողը կամ Խորենացին է: Սակայն չի կարելի նույնը պնդել բոլոր նախակրթությունների կամ վարժությունների լեզվի վերաբերյալ: Տարբերություններ նկատելի են ինչպես տեսական մասի և վարժությունների լեզվի, այնպես էլ՝ զանազան վարժությունների լեզվի միջև: Գ. Հով-

70 Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Ա, Երևան, 1979, էջ 9:

71 Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայաբանութիւն Սրբոց, Ե, Վենետիկ, 1812, էջ 320:

72 Գ. Հովսեփյան, Դավիթ Հարբացին և Պիտոյից գիրքը, «Արարատ», Վաղարշապատ, 1908, էջ 207:

սեփյանը պնդում է, որ կան նաև ցուցումներ, որոնք կասկածելի են դարձնում «Պիտոյից գիրքն» ամբողջությամբ մի մարդու գործ համարելը: Իր դիտողությունների հիման վրա նա եզրակացնում է. «Ինչպես և լինի, անվիճելի է, որ Դավիթ Հարթացին ծանոթ էր «Յաղագս շան» վարժության հետ»<sup>73</sup>:

Անառարկելի է, որ Անհաղթը հռետորական արվեստին հմուտ էր: Շատ հավանական է, որ Թրակացու «Քերականության» թարգմանությունից հետո նա մասնակցած լինի նաև «Պիտոյից գրքի» որոշ մասերի թարգմանությանը: Հետևաբար, այս երկերի թարգմանությունները հիմք են տալիս ասելու, որ Դավիթ Անհաղթն իր գործունեությունը սկսել է V դարի կեսերից:

Հ. Մանանդյանը Դավիթ Անհաղթի մասին հայ մատենագրական ավանդությունը առասպել համարելով, իմաստասիրական հնագույն երկերն ու մեկնությունները վերագրում է զանազան հեղինակների՝ Օլիմպիոդորոս-էլիասին, նորալատոնական Դավթին, Յամբղիքոսին ու Անատոլիոսին և եզրակացնում է, որ «Դավթի ու Օլիմպիոդորոս-էլիասի խմբի մեկնությունները շեն կարող հորինված, ուրեմն և թարգմանված լինել V դարում: ...որովհետև այդ մեկնությունները VI դարի մեկնիչների աշխատություն են»<sup>74</sup>: Ըստ այդմ, Հ. Մանանդյանի կարծիքով հունաբան դպրոցի թարգմանությունները կատարվել են V դարի վերջից կամ VI և VII դարերում. առաջին խմբի թարգմանությունները՝ VI դարի առաջին կեսում, երկրորդ խմբի թարգմանությունները՝ VI դարի երկրորդ կեսում, իսկ երրորդ խմբի թարգմանությունները՝ հիմնականում VII դարում:

Հ. Մանանդյանի այս տեսակետն իր ժամանակին քննադատել են Մ. Աբեղյանը, Թ. Ավգալբեկյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Զահուկյանը և ուրիշներ: Մ. Աբեղյանը դրում է. «Այս տեսակետը ժամանակի նկատմամբ ճիշտ չէ, ուստի և ընդունելի չէ: Այդ թարգմանությունների սկիզբը եղել է ոչ թե V դարի վերջերին, այլ այդ դարի երրորդ քառորդին, կեսերից ի վեր»<sup>75</sup>:

Թ. Ավգալբեկյանը իր «Խորենացու «Պատմության» լեզուն հունաբան դպրոցի շրջանների կապակցությամբ» զեկուցման կոնսպեկտում խիստ քննադատության ենթարկելով ինչպես Խորենացու ժամանակի, այնպես էլ հունաբան դպրոցի շրջանաբաժանման մասին Հ. Մանանդյանի տեսակետը, գրում է. «Մենք այս մասում պայմանաբար ընդունեցինք՝ Հ. Մանանդյանի հունաբան դպրոցի շրջանների բաժանումը: Մենք կարող էինք մանրամասն առարկել նրա այս տեսության դեմ, բայց որովհետև մեր խնդիրը Խորենացու ժամանակի հարցն էր բառապաշարի տվյալների համաձայն, ուստի բավականանում ենք շեշտելով, որ հունաբան դպրոցի նրա ուսումնասիրությունը չորս հիմնական ու խոշոր հակասություն ունի. ա) Անհեթեթ բան է ամբողջ, գրեթե ամբողջ հինգերորդ դարը համարել հունաբանությունից ու սրա ազդեցությունից զերծ ժամանակաշրջան: բ) Գիտականորեն սխալ է հունաբան խմբերի հարաբերությունը լոկ իբրև հաջորդականություն պատկերացնել և անտեսել, որ միևնույն ժամանակաշրջանում հնարավոր են գրական տարբեր խմբեր ու լեզվական նորարարներ...»<sup>76</sup>:

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 213:

<sup>74</sup> Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, էջ 87:

<sup>75</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 101:

<sup>76</sup> Թ. Ավգալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 129—

2. Մանանդյանն իր «Խորենացու առեղծվածի լուծումը» գրքի հավելվածում ուսումնասիրելով Խորենացու «Պատմության» լեզվական առանձնահատկությունները, բազմաթիվ փաստերով ապացուցում է, որ Պատմահայրը ծանոթ է եղել ոչ միայն պիտոյից-փիլոնյան խմբի թարգմանություններին, այլև արիստոտելյան երկերին ու դրանց մեկնություններին, այսինքն՝ հունարան դպրոցի երկրորդ և երրորդ խմբի թարգմանություններին: 2. Մանանդյանի եզրակացությունը Խորենացու ժամանակի մասին անշուշտ սխալ է, սակայն Խորենացու՝ հունարան դպրոցի երկրորդ խմբի թարգմանություններին ծանոթ լինելը հաստատվում է նաև այն փաստով, որ նա օգտվել է Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայերեն թարգմանությունից: Գ. Տեր-Մկրտչյանը իր զույգ հոդվածներով<sup>77</sup>, հենվելով տոմարական հաշվումների վրա, ցույց տվեց ու պնդեց, որ Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայերեն թարգմանությունը կատարվել է 480—484 թվադրված: Միաբանին հաջողվեց նաև պարզել, որ «Գիրք Թղթոց» ժողովածուի մեջ պահպանված կրոնադավանաբանական բովանդակությամբ ու հունարան հայերենով երկու Թղթերից մեկի հեղինակը Մովսես Խորենացին է, որն օգտվել է «Հակաճառության» թարգմանությունից, իսկ մյուսինը՝ Հովհան Մանդակունին, որն օգտվել է Խորենացու Թղթից, նաև «Հակաճառության» թարգմանությունից<sup>78</sup>: Սա ևս փաստացի մի ապացույց է, որ հունարան դպրոցի երկրորդ խմբի թարգմանությունները կատարվել են ոչ թե VI, այլ V դարի երկրորդ կեսին:

Վերոհիշյալ բոլոր դիտողությունները ստիպում են վերանայել հունարան դպրոցի դարգացման՝ 2. Մանանդյանի առաջարկած երեք շրջանները և ճշտել նրանց ժամանակը, որովհետև ինչպես փաստերը ցույց են տալիս, այդ թարգմանությունները կատարվել են ոչ թե VI և VII, այլ հիմնականում V դարում, կրտսեր թարգմանիչների կողմից, որոնց ամենափայլուն ներկայացուցիչներից մեկը Դավիթ Անհաղթն էր: Հետևաբար փոխվում է նաև Դավիթ Անհաղթի անձնավորության, ժամանակի և գիտական ժառանգության մասին եղած տեսակետը: Նա ապրել և ստեղծագործել է V դարում:

Անձնավորության մասին խոսելով, մենք տարբերեցինք մի կողմից՝ նրա բազմաբնույթ բովանդակությամբ երկերը, որոնցում նա հանդես է եկել որպես քերական, քերթող, փիլիսոփա, թարգմանիչ և մեկնիչ. մյուս կողմից՝ նրա գործունեության երկու շրջանները. առաջին շրջանը՝ Բյուզանդիոնում և Ալեքսանդրիայում, որտեղ նա սովորել է, զբաղվել թարգմանությամբ ու մեկնությամբ, երկար տարիներ փիլիսոփայություն է ուսուցանել և գրել իր տրամաբանական ու փիլիսոփայական երկերը: Երկրորդ շրջանը՝ հայրենիք վերադառնալուց հետո, երբ նա, իր գիտական-լուսավորական գործունեության հետ միասին, շէր կարող շմասնակցել նաև իր ժամանակ հայ եկեղեցուն հուզող կրոնադավանաբանական սուր վեճերին: Այս բոլոր հանգամանք-

77 Գ. Տեր-Մկրտչյան, Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայ թարգմանության ժամանակը և Ս. գրքի երրորդ կամ «Նորարբեր» հայ թարգմանությունը, «Արարատ», Վաղարշապատ, 1908, էջ 564—589: Նույնի՝ Հայ մատենագրության հնագույն թվականները, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 154—163:

78 Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1979, էջ 393:

ները առիթ են հանդիսացել շփոթություն առաջացնելու նրա անձնավորության շուրջը:

Դավիթ Անհաղթի գիտական ժառանգությունը կազմող նրա հայտնի փիլիսոփայական շորս գործերին՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի», «Մեկնութիւն ի «Վերլուծակտնն» Արիստոտէլի» և «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի», պետք է ազելացնել Գիտնիսիոս Թրակացու «Արուեստ Քերականութեան» երկի հայերեն թարգմանությունը, «Մեկնութիւն քերականինը», «Պիտոյից գրքի» որոշ մասերը, «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ», «Դաւիթ Հարբացույ ե փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս» երկերը և, հավանաբար, նրան վերագրվող այլ գործեր, ճառեր, թարգմանություններ ու մեկնություններ, ինչպես օրինակ՝ Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» երկի հայերեն թարգմանությունն ու մեկնությունը, «Առածք հրնգր», «Վասն բաժանմանը» և այլն: Եղված երկերով անշուշտ չի սպառվում վաղ միջնադարի հայ հանճարեղ մտածողի գիտական հարուստ ու բազմակողմանի ժառանգությունը: Հուսով ենք, որ այս ուղղութեամբ հետագա ուսումնասիրությունները, Դավիթ Անհաղթին հաստատելով V դարում, նրան կվերադարձնեն նաև իր իսկ որոշ գործեր, որոնք անարգարացիորեն ուրիներին են վերագրվել:

#### К ВОПРОСУ О ЛИЧНОСТИ, ВРЕМЕНИ И НАУЧНОМ НАСЛЕДИИ ДАВИДА НЕПОБЕДИМОГО

Кандидат филол. наук А. Н. МУРАДЯН

(Резюме)

В конце XIX— начале XX вв. ряд армянских и европейских филологов, арменоведов и византинистов, взяв под сомнение сведения о Давиде Непобедимом, сохранившиеся в древних рукописях, постарались внести определенность в вопрос о его личности. В статье на основе рукописей делается попытка показать, что все известные в V—VII вв. Давиды, то есть Анахт, Грамматик, Поэт, Философ, Переводчик, Толкователь, Аркаци, Нергинаци и, может быть, Таронаци, за исключением Давида Багревандаци и Давида Ипата, являются одной и той же личностью— Давидом Непобедимым. В вопросе о времени его деятельности защищается мнение, что Давид жил и творил не в конце V— первой половине VI вв., а в V веке. Следовательно, Давид не мог быть учеником Олимпиодора Младшего, как полагали некоторые исследователи. Соответственно ему должны быть приписаны, кроме четырех его известных философских трудов, также перевод и толкование «Искусства грамматики» Дионисия Фракийского, отдельные части «Книги хрий», «Ода кресту», «Философские вопрошания» и другие работы, которые дополняют богатое и многостороннее научное наследие выдающегося армянского мыслителя раннего средневековья.